«ԷԿՈՒՄԵՆԻԿ ՇԱՐԺՄԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ»

Սույն թվականի նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 3-ը Ժնևում Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը կազմակերպել էր միջեկեղեցական մի հանդիպում՝ «Էկումենիկ շարժման վերակազմավորումը» թեմայով:

Միջոցառմանը ներկա են եղել թվով 106 մասնակիցներ Հին Արևելյան Ուղղափառ, Կաթոլիկ, Բողոքական Եկեղեցիներից, ինչպես նաև տարածաշրջանային և ազգային Եկեղեցիների խորհուրդներից, միջազգային էկումենիկ կազմակերպություններից, Քրիստոնեական համայնքներից:

Միջոցառմանը Հայ Առաքելական Եկեղեցուց՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնից մասնակցում էր ԱՄՆ հայոց Արևելյան թեմի Միջեկեղեցական քարտուղար Գերաշնորհ Տ. Վիգեն եպիսկոպոս Այքազյանը:

Նման խորհրդակցության անհրաժեշտությունը բխում էր այն իրողությունից, որ աշխարհում Քրիստոնեության առջև ծառացած նոր մարտահրավերներին դիմագրավելու և Հիսուս Քրիստոսի Ավետարանի տեսանկյունից դրանց արձագանքելու համար միասնական նոր և արդյունավետ աշխատանքներ են հարկավոր:

Խորհրդակցության ժամանակ քննարկումներ են եղել ընդհանրապես էկումենիկ շարժումը, ժամանակների փոփոխությունները և էկումենիզմը 21-րդ դարում թեմաներով: Եղել են քննարկումներ. «Էկումենիկ շարժման աստվածաբանական հիմքի վերահաստատում», «Ծրագրային աշխատանքի պլանավորում», «ԵՀԽ-ի, Տեղական Էկումենիկ Կազմակերպությունների և Ազգային Եկեղեցիների Խորհրդի համապատասխան դերի հստակեցում», «Էկումենիկ շարժման շրջանակներում մասնագիտացված գործակալությունների ծառայությունների դերի և նշանակության հստակեցում», «Քրիստոնեական աշխարհի համայնքների հետ նպատակաուղղված համագործակցություն», «Մեծ ֆինանսական կայունության հնարավորությունների ուսումնասիրում», «ԵՀԽ-ի դերը» թեմաներով:

Շարունակելու համար այս գործընթացը, քննարկվեց Շարունակական խմբի հաստատման հարցը: Այս խումբը պետք է կազմված լինի տարբեր կազմակերպությունների 15 ներկայացուցիչներից, որոնց անունները պետք է մինչև 2005 թ. փետրվարի 14-ը ներկայացվի ԵՀԽ-ի Կենտրոնական Կոմիտե:

Քննարկվել է նաև գործընթացի արդյունավետ շարունակման համար կանանց և երիտասարդների ընդգրկման հարցը:

Մասնակիցները որոշեցին ավելի արդյունավետ դարձնել հարաբերություններն ու համագործակցությունը ԵՀԽ-ի և տեղական Միջեկեղեցական կառույցների միջև:

ՎԱՉԳԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՔԵՍԱԲԼՅԱՆ
Միջեկեղեցական հարաբերությունների բաժին